ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Դեկտեմբերի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ նշվեց Ս. Ստեփանոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի հիշատակը, որը համարվում է նաեւ սարկավագների տոնը:

Նախորդ օրը՝ երեկոյան ժամերգության ընթացքում, տեղի ունեցավ կիսասարկավագության, ուրարակրության եւ դպրության տվչության արարողություն: Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Դ. լսարանի 18 սանի եւ քահանայից պատրաստության Բ. լսարանի 7 ուսանողի շնորհվեց ուրարակրության աստիճան, իսկ ճեմարանի Բ. լսարանի 10 սանի եւ քահանայից պատրաստության Ա. եւ Բ. լսարանների 11 ուսանողի՝ դպրության չորս աստիճանները:

Տոնի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում տեղի ունեցավ սարկավագական ձեռնադրություն: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ Տ. Գեւորգ եպս. Սարոյանը կատարեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 33 սանի, ինչպես նաեւ Արարատյան Հայրապետական թեմի եւ Տավուշի թեմի երկու սպասավորի սարկավագական ձեռնադրությունը:

Ձեռնադրությունից հետո Սրբազան Հայրը տոնի առթիվ շնորհավորեց նորընծաներին եւ Մայր Աթոռի սարկավագաց ողջ դասին: Անդրադառնալով սարկավագական կոչմանն ու ծառայությանը՝ Գեւորգ Սրբազանը մասնավորաբար նշեց. «...Սարկավագությունը հոգեւոր առաջին աստիճանն է, որ դուք այսօր ստացաք: Այն որոշակի պարտականություններ է ենթադրում, որ պիտի խոնարհաբար իրականացնեք: Բայց ամենակարեւորը հիշեք, որ այդ պարտականություններն իրականացնելու միակ գրավականը հավատքն է ձեր կոչման հանդեպ, անկեղծությունը ձեր առաքելության նկատմամբ: ...Ս. Ստեփանոսի նահատակության օրինակով սովորում ենք, թե ինչ է նշանակում լինել փոքրի մեջ հավատարիմ: Ձլիներ նրա օրինակը, միգուցե շատ քրիստոնյաներ հետ կանգնեին իրենց հավատքից՝ հալածանքների դաժանության վախից ազդված: Նա սովորեցնում է մեզ, որ կարեւոր չէ, թե ինչ աստիճան ունես, կարեւորն այն ոգին է, այն հավատքի անկեղծությունը, որը մղում է քեզ այդ հանձնառությանը: Ահա նրա կյանքի օրինակով ենք հասկանում Հիսուսի այն խոսքերը, որ ամենափոքրը ամենամեծն է: Ստեփանոսի ոգով պետք է ապարեզ մտնեք՝ պատրաստ նույնիսկ նահատակվելու, եթե դրա անհրաժեշտությունն առաջանա: Իմ մաղթանքն է ձեզ, որ սիրով

Ներսես Մեծ կաթողիկոսի ոսկեդարյան մեջլիսը

Սարգիսիանցի ձեռնադրությունը

հանձն առնեք ձեր պարտականությունները, որպեսզի իրոք զգաք Քրիստոսի լուծի քաղցրությունը»:

Ս. Պատարագից հետո Մայր Աթոռի բոլոր սարկավագներին եւ նորընծաներին հայրապետական իր օրհնությունը բաշխեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ծնորհավորելով սարկավագներին Ս. Ստեփանոսի փոնի առիթով՝ Վեհափառ Հայրապետը հորդորեց նրանց ամուր մնալ իրենց հավատքի մեջ, այն հավատքի, որ առաջնորդեց Ստեփանոս Նախասարկավագին նահատակության հանձնառության, որով եւ նա ամրացրեց Քրիստոսի Ս. Եկեղեցին: Նորին Սրբությունն ընդգծեց, որ հավատքը պայման է յուրաքանչյուր սպասավորի համար, նրա առաքելության ու ծառայության հաջողության համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց նաեւ, որ առանց հավատքի խորը գիտակցության եւ ապրումի հնարավոր չէ օգտակար սպասավորություն բերել, հոգեւոր ասպարեզին հատուկ դժվարին ճանապարհով ընթանալ եւ հաղթահարել ծառայական կյանքի մարտահրավերները: «Մենք հուսալի հայացքով ենք նայում ձեզ, որ պիտի զգաք, որպես ստեփանոսատիպ, նվիրյալ սպասավորներ Քրիստոսի Ս. Եկեղեցու, հավատքի գործերով զորացնեք մեր Եկեղեցին ու մեր ժողովրդի հավատը: ...Հայցում ենք, որ Տերը ձեր կյանքը օրհնություն դարձնի մեր Եկեղեցու եւ ժողովրդի համար: Իսկ ձեր կյանքը կարող է օրհնություն դառնալ միայն նվիրյալ ծառայության դեպքում», - ասաց Վեհափառ Հայրապետը: Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց սարկավագաց դասին եւ նվերներ բաշխեց փոնի առիթով:

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ունի 157 սարկավագ, որոնցից 95-ը՝ միաբանության շարքերում, իսկ 62-ը՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ «ՎԱՀՐԱՄ ԳԱՅՖԵՃՅԱՆԻ» ԱՆՎԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԳՐԱԴԱՐԱՆ, ՆՇՎԵՑ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԾՄԱՆ ՄԻԱՄՅԱԿԸ

Սույն թվականի դեկտեմբերի 23-ին Սամցխե-Ջավախքի Ախալցիխե քաղաքում կայացավ ստեղծագործողների «Վահրամ Գայֆեճյանի» անվան միության գրադարանի հանդիսավոր բացումը: Միության նախագահ Ալեքսանդր Իգիթխանյանը, խոսելով հայ գրքի եւ գրատպության 500-ամյակի մասին, գրադարանի բացումը խորհրդանշորեն կապեց այդ հոբելյանի հետ:

Հավաքվածներին ողջունեցին Վրաստանի հայ մտավորականների միության նախագահ Ռուբեն Թորոսյանը եւ Վրաստանի հայ երաժիշտների միության նախագահ Արտեմ Կիրակոզովը: Նրանք կարեւորեցին նորաբաց գրադարանի դերն ու նշանակությունը երիտասարդ սերնդին գիր-գրականությանը մերձեցնելու եւ զարգացնելու համար:

Մարդու կյանքում գրքի ունեցած դերի մասին խոսեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը եւ Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բաբգեն աբեղա Սալբիյանը՝ շեշտելով, որ հայ ժողովրդի համար գիրքը պատմականորեն եղել է հոգեւոր ուժի վերականգնման աղբյուր:

Ախալցիխեի երիտասարդական մշակութային կենտրոնի մանկական համույթը՝ խմբավար Հեղինե Մանասյանի գլխավորությամբ, կատարեց հայոց այբուբենին նվիրված երգեր:

Միջոցառումն ավարտվեց «Հայր մեր» աղոթքով:

Նույն օրը Սամցխե-Ջավախքի Ախալցիխեի շրջանի Փոքր Պամաճ գյուղի ,Սուրբ Խաչե եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ՝ նվիրված եկեղեցու վերանորոգման եւ վերաօծման մեկ տարվան: Օրվա պատարագիչն էր Ախալցիխեի, Ադիգենի, Ասպինձայի, Բորժոմի շրջանների հայության հոգեւոր տեսուչ Տ. Հակոբ աբեղա Սահակյանը: Պատարագն ընթացավ Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի «Սուրբ Գեւորգ» երգչախմբի հոգեւոր երգեցողության ներքո:

Տոնական Ս. Պատարագին ներկա էին՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը եւ Սամցխե-Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տ. Բաբգեն աբեղա Սալբիյանը: Տեղի հավատացյալ համայնքի հետ տոնակատարությանը մասնակցեցին Թբիլիսիի Ս. Էջմիածին եկեղեցու լուսարարապետ Տ. Մանուկ քահանա Ջեյնալյանը, կենտրոնին կից Վրաստանի հայ մտավորականների միության նախագահ Ռուբեն Թորոսյանը, Վրաստանի հայ երաժիշտների միության նախագահ Արտեմ Կիրակոզովը եւ ներկայացուցիչներ Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնից:

Ս. Պատարագի ավարտին թեմական առաջնորդը հավատացյալներին ուղղված իր խոսքում կարեւորեց եկեղեցու հոգեւոր եւ ազգային դերն ազգաբնակչության շրջանում: Նա տեղի մտավորականությանը հորդորեց աշխուժություն մտցնել բնակչության մշակութային կյանքում, համագործակցել Հայ Եկեղեցու հոգեւոր սպասավորների հետ, ստեղծել հոգեւոր երգչախումբ:

Բարձր գնահատելով եկեղեցու բարերարներ, ծնունդով պամաճեցի Աշոտ եւ Արտո Բաբոյանների, Ռուբեն Սահակյանի նվիրական աշխատանքը՝ Սրբազան Հայրն ըստ արժանվույն գնահատեց նաեւ գյուղական ճանապարհի շինարարության եւ բարեկարգման աշխատանքներն իրականացրած հոգաբարձուներին:

Առաջնորդ Սրբազանը տեղի բնակչությանը ջերմորեն շնորհավորեց գալիք Ամանորի, Ս. Ծննդյան եւ Աստվածհայտնության տոների կապակցությամբ: Նա հաղորդեց նաեւ Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանի շնորհավորանքներն ու բարեմաղթանքները:

Տոնը շարունակվեց մատաղի օրհնությամբ եւ ուրախ տոնախմբությամբ:

ԱՐՏԵՄ ԳՐԻԳՈՐԵՆՑ

Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Յունուարի 6-ին Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին նշեց մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնը, որի բերկրաշատ առիթով համայն հայութեան հոգեւոր կենտրոն՝ Միածնաէջ Մայր Տաճարում Ս. Պատարագ մատու-

Հայրապետական Օրհնությունը Գ. Պատրիարքարանում

ցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Տաճարի զանգերի աւետաբեր զօղանջների ներքոյ հայրապետական շքեղ թափօրը Վեհարանից Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանին ամպհովանիով առաջնորդեց Մայր Տաճար: Ամպհովանակիրներն էին՝ ,Հայաստանի Հանրապետութիւնե օրաթերթի գլխաւոր խմբագիր Տիգրան Ֆարմանեանը, երգիչ-երգահան Վահան Արծրունին, Ս. Փարաջանովի տուն-թանգարանի տնօրէն Զաւէն Սարգսեանը եւ ԳԱԱ Փիլիսոփայութեան եւ սոցիոլոգիայի ինստիտուտի տնօրէն Գեւորգ Պօղոսեանը:

Ս. Պատարագի ընթացքում Նորին Սրբութեանը որպէս առընթերականեր սպասաւորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հովնան եպիսկոպոս Յակոբեանը եւ Մայր Աթոռի Վարչատնտեսական բաժնի տնօրէն Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայեանը:

Ս. Ծննդեան հանդիսաւոր Պատարագին Ամենայն Հայոց Կաթողիկոսը տօնի առիթով հայրապետական իր պատգամն ուղղեց աշխարհասփիւռ համայն հայութեանը՝ ամէնքին փոխանցելով հրեշտակաբարբառ աւետիսը:

Ս. Պատարագի աւարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց Ջրօրհնէքի արարողութիւն: Այս տարի Մայր Տաճարում Ջրօրհնէքի Խաչի կնքահայրն էր ակադեմիկոս Սեն Արեւշատեանը:

Ս. Պատարագի արարողութեանը ներկայ էին ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամեանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանը, Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամներ, կառավարութեան անդամներ, պետական բարձրաստիճան պաշտօնեաներ, Հայաստանում հաւատարմագրուած օտարերկրեայ դիւանագէտներ, կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի ներկայացուցիչներ:

Ս. Պատարագից յետոյ Ալէք եւ Մարի Մանուկեան Գանձատան սրահում տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հունվարի 6-ին Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին այցելեց Հավլաբարի Ս. Էջմիածին եկեղեցի, որտեղ ներկա գտնվեց Ս. Ծննդյան տոնական Ս. Պատարագին: Վրաստանի վարչապետի հետ Ս. Պատարագին մասնակցեցին Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրթյանը, Վրաստանի վերինտեգրման հարցերով պետնախարար Պատտա Զաքարեիշվիլին, Զաքարիա Քուցնաշվիլին, խորհրդարանի անդամներ Ռուսլան Պողոսյանը, Գիգի Ծերեթելին, Անվտանգության խորհրդի փոխքարտուղար Թամար Կինծուրաշվիլին, խորհրդարանի եւ կառավարության անդամներ:

Հավարտ Ս. Պատարագի Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպս. Միրզախանյանը, դիմելով ներկաներին, խոսեց հայ եւ վրաց ժողովուրդների դարավոր բա-

ռեկամության մասին, որ պատմականորեն դրսեւորվել է հավատակից ժողովուրդների հարաբերություններում, երկու եկեղեցիների բարեկամությամբ: Սրբազան Հայրը օրհնության եւ բարեմաղթանքի խոսքեր ուղղեց երկրի վարչապետին Հայաստանի Հանրապետություն կատարելիք առաջիկա այցի կապակցությամբ:

Այնուհետեւ հավաքվածներին Ս. Ծնունդի, Ատրվածհայտնության եւ Ջրօրհնեքի կապակցությամբ շնորհավորանքի խոսքերով դիմեց Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին. «Ուրախ եմ, որ հնարավորություն ունեմ կիսելու այն մեծ ցնծությունը, որը գալիս է Ս. Ծննդյան, Ջրօրհնեքի հրաշափառ տոներից: Վրաստանի ազգային, մշակութային եւ կրոնական բազմազանությունը մեր երկրի ամենամեծ հարստությունն է: Մեր երկիրը հպարտ է այն մշակութային ժառանգությամբ, որն ստեղծել են այստեղ բնակվող տարբեր ազգային եւ կրոնական խմբերի ներկայացուցիչները: Մեր պարտքն է պահել եւ պաշտպանել այս ժառանգությունը որպես համամարդկային մշակույթի մաս», - հայտարարեց երկրի վարչապետը:

Տոնական Ս. Պատարագից հետո վարչապետ Բիձինա Իվանիշվիլին եւ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպս. Միրզախանյանը ներկա գտնվեցին Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնում Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության (նախագահ Սուսաննա Խաչատրյան) կազմակերպած հայկական գաթայի փառատոնին: Հայկական ավանդական գաթան, որպես մեր պատմության եւ կենցաղի խորհրդանիշ, Վրաստանի հայաբնակ տարբեր շրջաններից ներկայացվել էր իր տարատեսակներով՝ արժանանալով հյուրերի բարձր գնահատականին::

Բաժակ բարձրացնելով երկու ժողովուրդների դարավոր բարեկամության համար՝ վարչապետ Իվանիշվիլին հայտարարեց. «Մեծ է մեր համաքաղաքացի հայերի դերը Վրաստանի պետությունում, տնտեսական եւ մշակութային զարգացման գործում, եւ այս դերը դեռեւս պատշաճ ուսումնասիրության եւ գնահատման կարիք ունի»: Նա հավաքվածներին վերստին շնորհավորեց Ամանորի եւ Ս. Ծնունդի կապակցությամբ:

Հյուրերը դիտեցին «Հայարտուն» մշակույթի կենտրոնի «Ջեյրան» պարային համույթի (պարուսույց Սվետլանա Երիցյան) գեղեցիկ պարը, մենակատարներ Աննա Պողոսովայի եւ Ռուբեն Ոսկանյանի երգերը:

Ս. Ծննդյան տոնական ծրամադրությունը շարունակվեց հայկական գաթայի հյուրասիրությամբ, ուրախ երգով ու պարով:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄՍԼՈ ԴԻՎԱՆ

ԿԱԼԱՆԱՎԱՅՐԻՑ ԱՋԱՏՎԵՑԻՆ ՀԱՅԱՁԳԻ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐ ԱՐՄԵՆ ԳԵՈՐԳՅԱՆԸ ԵՒ ՌՈՒԲԵՆ ՇԵԿՈՅԱՆԸ

2010 թ. հոկտեմբերին Աջարիայի հայ համայնքի անվանի գործիչներ Արմեն Գեւորգյանին եւ Ռուբեն Շեկոյանին կեղծ մեղադրանքներով ձերբակալեցին եւ առանց հիմնավոր ապացույցների դատապարտեցին 11 տարվա ազատազրկման: 2012 թ. դեկտեմբերին

Վրաստանի խորհրդարանի ընդունած համաներման մասին օրենքի համաձայն՝ հունվարի 13-ին, մյուս 190 հոգու հետ միասին, կալանավայրից ազատվեցին նաև մեր հայրենակիցներ Արմեն Գեորգյանը եւ Ռուբեն Շեկոյանը:

Հարազատների եւ ընկերների ուղեկցությամբ, որոնք վաղ առավոտից գտնվում էին Թբիլիսիի Գլդանի համար 8 կալանավայրի բակում, նախկին կալանավորները ուղեւորվեցին Հավլաբարի Ս. Էջմիածին եկեղեցի, որտեղ նրանց դիմավորեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպս. Միրզախանյանը՝ հոգեւոր դասի եւ պաշտոնեության հետ:

Սրբազան Հայրը եկեղեցում աղոթեց, օրհնեց Արմեն Գեորգյանին եւ Ռուբեն Շեկոյանին: Թեմական առաջնորդն իր խոսքում բարձր գնահատեց նոր իշխանությունների արդար եւ մարդասիրական դրսեւորումները: Նա շնորհավորեց եւ բարեմաղթեց երիտասարդներին:

Արմեն Գեորգյանն իր եւ մյուս քաղբանտարկյալների անունից երախտագիտություն հայտնեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպս. Միրզախանյանին, հոգեւոր դասին, կալանավայրերի հետ տարվող աշխատանքների պատասխանատու Տեր Հուսիկ քհն. Հարությունյանին եւ առաջնորդի օգնական Միքայել Ավագյանին, որ մշտապես այցելել են իրենց, քաջալերել եւ հուսադրել: Նա նաեւ երախտագիտություն հայտնեց Վրաստանի նոր իշխանություններին, խորհրդարանին, մարդու իրավունքների պաշտպաններին, որոնք ջանք ու եռանդ չխնայեցին իրենց ազատման համար:

Արմեն Գեորգյանը երկար տարիներ եղել է Աջարիայի հայ համայնքի ղեկավարը եւ 90-ական թթ. կազմակերպել է Բաթումի Ս. Փրկիչ եկեղեցու վերանորոգման աշխատանքները, որոնք ավարտվել են 1996-ին:

Արմեն Գեորգյանը եւ Ռուբեն Շեկոյանը մեծ հարգանք են վայելում Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում ոչ միայն հայերի, այլ այնտեղ բնակվող ողջ ազգաբնակչության շրջանում:

Սպասվում է նաեւ հայազգի գործիչ, քաղբանտարկյալ Վահագն Չախալյանի ազատումը:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ

ԱՐԵՒԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՒ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՋԵՒ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ 10-ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ

Հունվարի 22-27-ը Վատիկանում տեղի ունեցավ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու եւ Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների միջեւ պաշտոնական աստվածաբանական երկխոսության միջազգային հանձնախմբի 10-րդ հանդիպումը: Հանդիպման օրակարգում էր մինչեւ Ե. դարը եկեղեցիների միջեւ հարաբերությունների մասին միասնական փաստաթղթի պատրաստումը:

Աստվածաբանական երկխոսության ներկայացուցիչները հանդիպեցին նաեւ Նորին Սրբություն Բենեդիկտոս ԺԶ. Պապի հետ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհ-

նությամբ ժողովին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնում էին Տավուշի թեմի առաջնորդ, Հայաստանի Ապվածաշնչային ընկերության տնօրեն Տ. Եզնիկ արքեպ. Պետրոսյանը եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դասախոս Տ. Շահե աբեղա Անանյանը: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից հանդիպմանը ներկա էին Տ. Օշական արքեպ. Չոլոյանը եւ Տ. Նարեկ արքեպ. Ալեմեզյանը:

Արեւելյան Ուղղափառ եկեղեցիների եւ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու ապվածաբանական պաշտոնական երկխոսության 11-րդ հանդիպումը տեղի կունենա 2014 թ. Հնդկաստանում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ԸՆՏՐՈՒԵՑԱՒ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ 97ՐԴ ՊԱՏՐԻԱՐՔ

Սրբոց Յակոբեանց Ուխտի Միաբանական ընդհանուր ժողովը գումարեց իր 22րդ նիստը 24 յունուար 2013ին: Սրբոց Յակոբեանց Ուխտի միաբանութենէն երեսուն երեք հայրեր Երուսաղէմէն եւ արտասահմանէն եկած էին ընտրելու երջանկայիշատակ Տ. Թորգոմ արք. Մանուկեանի արժանաւոր յաջորդը:

Միաբանական ընդհանուր ժողովի նիստը բացաւ Պատրիարքական տեղապահ Գերշ. Տ. Արիս արք. Շիրվանեան: Օրակարգի վրայ նիւթն էր՝ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան արժանաւոր գահակալի ընտրութիւնը: 23 յունուար 2013ին, երեկոյեան ժամը 4:30ին, Միաբանական ընդհանուր ժողովը պատրաստեց պատրիարքական ընտրութեան թեկնածուներու հնգանուն ցանկը: Թեկնածուներն էին Պատրիարքական տեղապահ Գերշ. Տ. Արիս արք. Շիրվանեան, Սուրբ Աթոռոյս լուսարարապետ Գերշ. Տ. Նուրհան արք. Մանուկեան, Տաթեւ արք. Ղարիպեան, Սեւան արք. Ղարիպեան եւ Գիսակ արք. Մուրատեան:

24 յունուար 2013ին, առաւօտեան ժամը 10ին, Պատրիարքական տեղապահ Գերշ. Տ. Արիս արք. Շիրվանեան աղօթքով բացաւ Միաբանական ընդհանուր ժողովի երրորդ նիստը, որմէ յետոյ ժողովը անցաւ իր օրակարգին ընտրելու հնգանուն ցանկէն արժանաւորը բազմելու Սրբոց Յակոբեանց պատրիարքական գահին վրայ: Գաղտնի քուէարկութեամբ կատարուեցաւ Պատրիարքական թեկնածուի ընտրութիւնը: Քուէներու բացարձակ մեծամասնութեամբ ընտրուեցաւ Գերշ. Տ. Նուրհան արք. Մանուկեան որպէս 97րդ Պատրիարք:

Ընտրութենէն անմիջապես ետք, նորընտիր Պատրիարքը իր շնորհակալական խօսքն ըրաւ միաբան հայրերուն, որմէ յետոյ երգուեցաւ «Սիոնի» օրհներգը: Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի զանգակները ղօղանջեցին ընտրութեան լուրը: Միաբան հայրեր շնորհաւորեցին նորընտիր Պատրիարքը ու թափօր կազմելով առաջնորդուեցան դէպի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար: Գլխադիրի մատրան առաջ նորընտիր Պատրիարքը կատարեց իր ուխտը եւ տուաւ իր առաջին Օրհնութիւնն ու պատգամը որպէս նորընտիր Պատրիարք յաջս սաղիմահայ գաղութին ու դպրոցական սաներուն:

Նորընտիր Պատրիարքի օրհնութենէն ու պատգամէն վերջ Միաբանութիւն եւ ժողովուրդ բարձրացան Պատրիարքարան՝ շնորհաւորելու նորընտիր Պատրիարքը:

Նորընտիր Պատրիարք Նուրհան արք. Մանուկեան ծնած է Հալէպ, Սուրիա 1948ին:

Ձեռնադրուած է աբեղայ 1971ին: Ընտրուած է Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ 1998ին եւ 1999ին եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացած է ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետէն:

ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Հունվարի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու շնորհավորանքն է հղել Տ. Նուրհան արքեպ. Մանուկյանին Երուսաղեմի Հայոց Պատրիարք ընտրվելու առիթով:

«...Փառք Ամենակալին, որ Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը ուխտյալ եկեղեցականաց հավատարիմ ծառայությամբ դարեր ի վեր արդյունավորում է իր սրբազան առաքելությունը Տերունական սուրբ վայրերում: Մեր հոգու հայցն է, որ Տիրոջ օրհնության ներքո Սրբոց Հակոբյանց զինվորյալ միաբանությունը Ձեր գլխավորությամբ շարունակի փերուսապատվեր սպասավորությունն ու նախանձախնդիր պահպանությունը Սուրբ տեղյաց մեր նվիրական սրբավայրերի», - ասվում է Վեհափառ Հայրապետի շնորհավորագրում:

Նորին Սրբությունը մաղթել է, որ Բարձրյալն Ապրված աջակից լինի նորընտիր Պատրիարքին՝ շնորհելով արգասալի իրագործումներ ու մշտանորոգ հաջողություններ, և առավել զորացնի Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը՝ ի փառս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և ի մխիթարություն համայն հավատավոր հայ ժողովրդի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանը (ավազանի անունը՝ Պողոս) ծնվել է 1948 թ. հուլիսի 22-ին, Հալեպում: Նախնական կրթությունը ստացել է Հալեպի Հայկազյան վարժարանում:

1961թ. ընդունվել է Կիլիկիո Կաթողիկոսության Անթիլիասի դպրեվանքը:

1966 թ. ընդունվել է Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց ժառանգավորաց վարժարանը:

1968 թ. հուլիսի 27-ին ձեռնադրվել է սարկավագ:

1971թ. հունիսի 15-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Եղիշե պատրիարք Տերտերյանի՝ վերակոչվելով Նուրհան աբեղա:

1971-1972թթ. ժառանգավորաց վարժարանի փոխտեսուչն էր: 1975 թ. նույն վարժարանի տեսուչն էր:

1972-1973 թթ. նշանակվել է Ծվեյցարիայի (Ժնեւ) հայոց թեմի հոգեւոր հովիվ:

1973-ին ստացել է վարդապետական ատիճան: 1974-1980 թթ. Իսրայելի (Հայֆա-Յաֆա) հոգեւոր հովիվն էր:

1980-ին Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի հրավերով մեկնել է Նյու Յորք, ուսանել եպիսկոպոսական Ընդհանուր ատվածաբանական ճեմարանում եւ ավարտել եռամյա դասընթացը:

1994-ին եղել է Հյուսթընի (Թեքսաս նահանգ) Սուրբ Գեւորգ եկեղեցու հոգեւոր հովիվ: 1998 -ին Հայր Նուրհանն ընտրվել է Երուսաղեմի Ս. Աթոռի լուսարարապետ:

1999 թ. դեկտեմբերի 14-ին ձեռամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսի ձեռնադրվել եւ օծվել է եպիսկոպոս:

2000 թվականի դեկտեմբերի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբապառ կոնդակով նրան շնորհվել է արքության պատիվ:

2009 թվականին Երուսաղեմի Հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը գերաշնորհ Տեր Նուրհան արքեպիսկոպոսին նշանակեց պատրիարքական փոխանորդ: Մինչեւ պատրիարքական ընտրությունը ծառայում էր որպես պատրիարքարանի գործերի կառավարիչ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԲԸՄ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հունվարի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանին:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը եւ պրն. Սեդրակյանն անդրադարձան Երուսաղեմի Հայոց Պատրիարքի ընտրությանը՝ վստահություն հայտնելով, որ նորընտիր Պատրիարք Տ. Նուրհան արքեպ. Մանուկյանը եռանդով ու նվիրումով կլծվի պատմական Ս. Աթոռի զորացման եւ Ս. տեղյաց մեջ հայոց իրավունքների պաշտպանության գործին:

Խոսելով Սիրիայում տիրող մտահոգիչ կացության եւ սիրիահայ համայնքի վիճակի մասին՝ Նորին Սրբությունն ու ՀԲԸՄ նախագահը հաստատեցին, որ Հայոց Եկեղեցին եւ ՀԲԸՄ-ը պետք է շարունակեն ամեն կերպ աջակցել սիրիահայ համայնքին՝ թեթեւացնելու ծանր կացության մեջ հայտնված հայորդիների կարիքները: Քննարկվեցին նաեւ Հայաստանում եւ այլ երկրներում հաստատված սիրիահայերին օգնություն ցուցաբերելու ուղիները:

Զրույցի ընթացքում տիար Պ. Սեդրակյանը մտահոգությամբ անդրադարձավ Սիյուռքում առկա հայապահպանության խնդիրներին եւ երիտասարդ սերնդի հայեցի կրթության անհրաժեշտությանը: ՀԲԸՄ նախագահը դրանց հաղթահարման, ինչպես նաեւ Հայրենիք-Սիյուռք հարաբերությունների ամրապնդման գործում կարեւորությամբ ընդգծեց Հայ Եկեղեցու դերակատարությունը:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ նախագահը քննարկեցին նաեւ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության համատեղ իրականացվող ծրագրերի ընթացքը: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց փիար Պ. Սեդրակյանին Հայ Եկեղեցուն ցուցաբերվող շարունակական զորակցության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱԼԱՆԱՎԱՅՐԻՑ ԱԶԱՏՎԵՑ ՀԱՅԱԶԳԻ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ ՎԱՀԱԳՆ ՉԱԽԱԼՅԱՆԸ

Հունվարի 24-ին կալանավայրից ազատվեց ջավախքահայ քաղբանտարկյալ Վահագն Չախալյանը:

Վրաստանում տեղի ունեցած իշխանափոխության եւ 2012 թ. դեկտեմբերին Վրաստանի խորհրդարանի ընդունած համաներման մասին օրենքի համաձայն՝ վերստին ազատության մեջ է հայ մեծանուն եւ նվիրյալ գործիչը, արդարության համար անվեհեր մարտիկը, որ 2001 թ. նվիրվելով հասարակական կյանքին՝ գործել է Ջավախքում հայոց եկեղեցիների պահպանության, դպրոցներում մայրենի լեզվի դասավանդման, ջավախքահայերի իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Հարազատների եւ ընկերների ուղեկցությամբ, որոնք գտնվում էին ք. Ռուսթավի թ. 1 կալանավայրի բակում, քաղբանտարկյալը ուղեւորվեց Թբիլիսիի Հավլաբարի Ս. Էջմիածին եկեղեցի, որտեղ նրան դիմավորեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպս. Միրզախանյանը՝ հոգեւոր դասի եւ պաշտոնեության, վիրահայ համայնքի եւ հասարակայնության ներկայացուցիչների հետ: Վահագն Չախալյանին ջերմորեն դիմավորեցին ընդամենը 10 օր առաջ կալանավայրից ազատված հայազգի քաղբանտարկյալներ Արմեն Գեւորգյանը եւ Ռուբեն Շեկոյանը:

Սրբազան Հայրը Թբիլիսիի Ս. Էջմիածին եկեղեցում հոգեւոր դասի հետ միասին աղոթք բարձրացրեց եւ օրհնեց ազատություն վերադարձած Վահագն Չախալյանին: Թեմական առաջնորդն իր խոսքում բարձր գնահատեց նոր իշխանությունների արդար եւ մարդասիրական դրսեւորումները: Նա շնորհավորեց եւ իր հոգեւոր խոսքով բարեմաղթեց երիտասարդին, որ ինչ-որ մարդկանց քմահաճույքով եւ կեղծ մեղադրանքներով 4 ու կես տարի կորցրեց ազատությունը, կտրվեց հարազատներից ու ընտանիքից՝ գտնվելով կալանավայրում: Բազմաթիվ անգամ կենաց եւ մահու օրեր ապրած Չախալյանը, սակայն ամուր մնաց՝ կռիվ տալով կյանքի եւ ապրելու համար, ապրելու՝ հանուն այն գաղափարների, որոնք կիսատ էին մնացել: Տեր Վազգեն եպս. Միրզախանյանը արժեւորեց այն, որ Վահագն Չախալյանի արդար գործի համար պայքարում էին ոչ միայն Ջավախքում, Վրաստանում եւ Մայր Հայրենիքում, այլեւ ողջ Սփյուռքում՝ Չախալյանին գնահատելով որպես հոգեւոր նահատակ, որ պատիժ էր կրում ճշմարտության համար:

Հեռախոսով Վահագն Չախալյանին իր Հայրապետական օրհնությունը հղեց Ն.Ս.Օ.Տ.Տ.

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Չախալյանն իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին նրա հայրական խնամքի եւ ուշադրության համար:

Վահագն Չախալյանը երախտագիտության խոսքեր ուղղեց Վեհափառ Հայրապետին, Վիրահայոց թեմի առաջնորդին, հոգեւոր դասին, կալանավայրերի հետ փարվող աշխատանքների պատասխանատու Տեր Հուսիկ քահանա Հարությունյանին եւ առաջնորդի օգնական Միքայել Ավագյանին, բոլոր նվիրյալ հայորդիներին, որոնք մշտապես այցելել են կալանավայր, քաջալերել եւ հուսադրել են իրեն: Նա նաեւ իր շնորհակալությունը հայտնեց Վրաստանի նոր իշխանություններին, խորհրդարանին, Մայր Հայրենիքին եւ միջազգային հանրությանը, որոնք ջանք ու եռանդ չխնայեցին իր ազատման համար: «Իմ պայքարը եղել է հանուն արդարության, մեր պարտքն է մնալ մեր Եկեղեցուն հավատարիմ, մեր լեզվին եւ մեր ժողովրդին նվիրված եւ այդ գաղափարները փոխանցել մեր սերունդներին», - ասաց Վահագն Չախալյանը:

Այնուհետեւ Վահագն Չախալյանն ուղեւորվեց Վրաստանում ՀՀ դեսպանություն, որտեղ նրան հյուրընկալեց Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Հովհաննես Մանուկյանը:

Ավելացնենք, որ Վահագն Չախալյանի ձերբակալության խնդրով փոքրամասնությունների իրավունքների հարցով համաշխարհային ճանաչում ունեցող փորձագետ Ֆերնանդ դե Վարենը պատրաստել է զեկուցում՝ "The Perils of Being a National Minority: Human Rights and Chakhalyan v. Georgia", որը հասանելի է http://www.yerkir.eu/2012.05.22-YerkirEurope-ReportHumanRightsViolationsInGeorgia.pdf հասցեով:

Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է նաեւ https://www.facebook.com/media/set/?set=a.319490128167806.75927.113192792130875 հասցեով:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԸ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՆԱԽԱԳԱՀ ՍԱԱԿԱՇՎԻԼԻԻՆ ԵՒ ՄԱԾ ՄՅՈՒՍ ԼԻԴԵՐՆԵՐԻՆ ՁԵՌՆՊԱՀ ՄՆԱԼ ՍԱԴՐԻՉ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Քաղբանտարկյալների եւ մյուս համաներված անձանց, այդ թվում՝ Վահագն Չախալյանի կալանավայրից ազատմանը բացասաբար արձագանքեց ընդդիմադիր Միասնական ազգային շարժումը, որի ներկայացուցիչները վերջին օրերի եւ շաբաթվա ընթացքում, մասնավորապես երեկ ամբողջ օրը ոչ վայելուչ հայտարարություններ էին անում՝ փորձելով նպաստել հակահայկական տրամադրությունների տարածմանը Վրաստանի բազմազգ հասարակության շրջանում:

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին եւ ՄԱԾ քաղաքական կուսակցության գլխավոր քարտուղար Վանո Մերաբիշվիլին հայտարարեցին, որ քաղաքական բանտարկյալ դարձած Վահագն Չախալյանը իբր անջատողական է, արտասահմանյան հատուկ ծա-

ռայությունների գործակալ եւ վրացական պետության թշնամի: Նման բաց հայտարարություններով նախագահը եւ ներքին գործերի նախկին նախարարը խոստովանեցին, որ Միասնական ազգային շարժման իշխանությունում գտնվելու ժամանակ արդարադատությունը փաստորեն բացակայում էր: Եթե Զահալյանը իրավամբ անջատողական էր եւ գործակալ, այդ դեպքում ինչու նա դատված չէր Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով: Այդ առեղծվածի բացատրությունը մեկն է. նախկին իշխանությունը առանձնահատուկ կերպով օգտագործում էր արդարադատության համակարգը իր քաղաքական ընդդիմադիրների դեմ:

Նախագահ Սահակաշվիլին իրեն թույլ տվեց նաեւ հիշատակել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը՝ հայտարարելով, որ ազատումը տեղի է ունեցել Նորին Սրբության խնդրանքով: Պատասխանենք, որ նախ՝ դիմումը բխում էր մարդասիրական գաղափարներից եւ Զահալյանի ծնողների խնդրանքով էր, որին չէր կարող չարձագանքել Ամենայն Հայոց Հայրապետը: Երկրորդ՝ Զահալյանն այսպես թե այնպես ընկնում էր համաներման տակ, քանզի նա դատապարտված էր այն հոդվածներով, որոնք համապատասխանում են Վրաստանի 2013 թ. հունվարի 12-ի «Համաներման մասին» օրենքին:

Վերջին օրերին նախագահ Սահակաշվիլին բազմիցս հիշատակել է նաեւ քաղաքական բանտարկյալ Արմեն Գեւորգյանի անունը, ում նույնպես մեղադրել է լրտեսության մեջ: Մի՞թե 200 քաղաքական բանտարկյալների ցուցակից Սահակաշվիլին կարողացավ մտապահել բացառապես այս ազգանունները եւ օգտագործել դրանք որոշակի նպատակներով: Հարկ է նշել, որ ելնելով մարդասիրական գաղափարներից՝ Արմեն Գեւորգյանի ազատման համար, մեր փվյալներով, իր ժամանակին միջնորդել է Նորին Սրբություն Համայն Վրաստանի Կաթողիկոս-պատրիարք Իլիա Երկրորդը:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմը դատապարտում է վերոնշյալ գործողությունները եւ հայտարարում ու կոչ է անում առանձին քաղաքական գործիչներին՝ կարճատեւ քաղաքական նպատակների համար չօգտագործել այնպիսի հարցեր, որոնք անմիջականորեն վերաբերում են ինչպես մեր բազմազգ հայրենիքի խաղաղությանը եւ անդորրին, այնպես էլ երկու եղբայրական ժողովուրդների՝ հայերի եւ վրացիների փոխհարաբերություններին:

Համոզված ենք, որ անկախ որեւէ քաղաքական կամ այլ տեղաշարժից, մեր ժողովուրդները ապագայում եւս կամրապնդեն եւ կխորացնեն բարիդրացիական եւ եղբայրական հարաբերությունները, իսկ Վրաստանի քաղաքացի հայերը եղել են եւ կմնան Վրաստանին նվիրված զավակներ:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Հունվարի 27-ին՝ Բանակի օրվա առիթով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, ավանդույթի համաձայն, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Հայոց բանակի

հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՀՀ բանակի բարձրագույն սպայական կազմի անդամներ:

Ս. Պատարագի ընթացքում Վրթանես Սրբազանը քարոզ խոսեց՝ անդրադառնալով հայ ժողովրդի կյանքում Հայոց բանակի կարեւոր դերին ու նշանակությանը. «Գոհություն Ամենազոր Աստծո, որ այսօր համայն մեր ժողովուրդն ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս աշխարհի միասնաբար տոնախմբում է Հայոց երիտասարդ եւ հաղթական բանակի 21-րդ տարեդարձը: Բանակ, որը թեպետ ստեղծվել ու կայացել է ոչ վաղ անցյալում, սակայն ապրել եւ հաղթանակների փայլուն պսակների է արժանացել՝ անցնելով ծանր եւ դժվարին ժամանակներով, այլեւ հայ զորականաց սուրբ եւ արդար արյան հեղումով»: Խոսքն ուղղելով ՀՀ զինված ուժերի ներկայացուցիչներին՝ Սրբազան Հայրը մասնավորապես նշեց. «Հորդորում ենք հայոց զինված ուժերի յուրաքանչյուր գիտակից ծառայակցի, որպեսզի լցված միաբանության ոգով, շարունակի իր արդար ու հաղթական երթը, քանզի Հայոց բանակը այն կարեւորագույն հիմնաքարն է, որի վրա պիտի խոյանա մեր ժողովրդի միասնության սրբազան տաճարը»:

Ս. Պատարագի ավարտին Մայր Տաճարի Իջման Ս. խորանի առջեւ, հանդիսապետությամբ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հանրապետական մաղթանքի արարողություն՝ ի շինություն եւ ի պայծառություն Հայաստան աշխարհի ու Հայոց բանակի:

Հանրապետական մաղթանքից հետո Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկ անգամ եւս շնորհավորելով ամենքին Հայոց բանակի 21-րդ տարեդարձի առիթով՝ իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ներկաներին: Անդրադառնալով թե՛ հոգեւոր սպասավորների եւ թե՛ զինվորականների ծառայության կարեւորությանը հայ ժողովրդի կյանքում՝ Նորին Սրբությունը նշեց, որ նրանք երկուսն էլ կոչված են պայքարելու չարի դեմ հոգեւոր եւ ֆիզիկական տեսանկյուններից՝ այն հասարակության միջից վերացնելու, սեր ու խաղաղություն հաստատելու եւ ապահով ու անսասան Հայրենիք կառուցելու համար:

Այնուհետեւ, ի գնահատություն Հայրենիքին ու հավատավոր ժողովրդին մատուցած ծառայությունների, Վեհափառ Հայրապետը Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանով պարգեւատրեց գեներալ-մայոր Վարդան Ավետիսյանին, գեներալ-լեյտենանտ Մարտին Կարապետյանին, գեներալ-լեյտենանտ Ստեփան Գալստյանին, գեներալ-մայոր Ալեքսան Ալեքսանյանին եւ գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանին:

Ապա ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրամանով՝ ՀՀ զինված ուժերի կազմավորման 21-րդ տարեդարձի առիթով Արցախյան ազատամարտին մասնակցած եւ զինված ուժերում հոգեւոր ծառայության ընթացքում իրենց նպաստը բերած շուրջ 20 հոգեւորական պարգեւատրվեց «Մարշալ Բաղրամյան», «Անդրանիկ Օզանյան», «Դրասդամատ Կանայան», «Գարեգին Նժդեհ», «Վազգեն Սարգսյան» եւ «Ծովակալ Հ. Ս. Իսակով» մեդալներով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հայոց Բանակի տոնը Մայր Աթոռում

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Էդուարդ սրկ. Կյուլպենկյանը (ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Կարպիս սրկ. Չիչեքյանը (Կանադայի թեմ)
Շահնուր սրկ. Այնեճյանը (Կանադայի թեմ)
Արթուր-Մինաս Սելեանը (Կանադայի թեմ)
Պոյաճյան Էդուարդ Արծրուն (Կանադայի թեմ)
Գրիգորյան Ֆրեդ(ԱՄՆ Արեւմտյան թեմ)
Միխայիլ Սարգիսյանցը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Մուրազ Սարգսյանը (Ազգային Բանակ)
Ալեքսան Ալեքսանյանը (Ազգային Բանակ)
Ստեփան Գալստյանը (Ազգային Բանակ)
Մարտին Կարապետյանը (Ազգային Բանակ)
Վարդան Ավետիսյանը (Ազգային Բանակ)